

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

أزتك جريدة يومية سياسية وأدبية - الجريدة المؤجلة، إيشادرويشيان

1500 Լ.Ո. 75ԴԿ ՏԱՐԻ, ԹԻԻ 268 (21318) ՀԻՆԳՇԱՐԹԻ, 30 ՅՈՒՆԻՍԿՐ 2003 10 ԷՁ

ԱՐՅԱԽՅԻ ԶԻՆՈՒՈՐ ՄԵ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻ ԱՁԵՐԻ ԱՐՉԱԿԱՁԵՆԻՆ ԿՈՂՄԷ

Յունուար 28ին Աղտամի մօտ Արպախանի եւ Լեռնային Ղարաբաղի սահմանագիծին վրայ պետի արձակազինի մը կողմէ սպաննուած է Լեռնային Ղարաբաղի բանակի Կինուորական ծառայող մը: «Տէ Զարթօ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան փոխ նախարար ԿՕՐ Վիթայի Բայասեան միջադէպին առնչութեամբ լայնածափ է, թէ «այդ ոճիրը կատարուած է տուեալ շրջանին մէջ ԵԱՀԿի պատուիրակութեան կողմէ կատարուած դիտարկումէն երեք օր մտք»:
Լեռնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարարութիւնը պաշտօնական գիր ներկայացուցած է Ստեփանակերտի մէջ ԵԱՀԿի ներկայացուցիչին, հայ Կինուորին սպանութեան առնչութեամբ:

ԻՍՐԱՅԷԼ ԸՆՏՐԵՑ ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԻԻՆԱՇԵՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ՝ ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆԸ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՐԱՅՆԵԼՈՎ

Լիբնուտի ապահոված ջախջախիչ յաղթանակին լոյսին տակ Իսրայէլը կը թեքի դէպի ծայրայեղ աջ, այնպիսի պահու մը, երբ ամբողջ շրջանը կը գտնուի պատերազմի մը սպառնալիքին դիմաց: Ոչ պաշտօնական արդիւնքներու համաձայն, վարչապետ Արիէլ Շարոնի ղեկավարած Լիբնուտ Կուսակցութիւնը 37 արժանապահոված է Բնեակեթի մէջ, ուր նախապէս ունէր 19 արժան:

Պաղեստինցիներ սարսափով ընդունեցին ընտրութիւններուն արդիւնքները՝ վայրագութեան աւելի մեծ ալիք մը նախատեսելով: Հակառակ մտավարկութիւններուն սակայն, պաղեստինեան իշխանութիւնը պատրաստակամութիւն յայտնեց գործակցելու Շարոնի կապուելիք կառավարութեան հետ:

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաբ անակնկալի մատնեց շատեր, երբ յայտարարեց, թէ պատրաստ է հանդիպում ունենալու Շարոնի հետ՝ կառավարութեան կապուելու անմիջապէս ետք:

Շարոնի յաղթանակը սակայն չի դիւրացներ կառավարութիւն կապուելու անոր աշխատանքը, որովհետեւ Իսրայէլի ընտրական համեմատական ներկայացուցչութեան դրութիւնը կը դժուարացնէ վարչապետին գործը:

Ընդդիմադիր Աշխատանքական Կուսակցութիւնը, որ նախկին խորհրդարանին մէջ 25 արժան ունէր, վեց արժան կորսնցուց: Խաղաղութեան գործընթացին ջատագով ձախակողմեան այլ կուսակցութիւն մը՝ Մերեց, իր կարգին տարբեր արժան չորս կորսնցուց: Կուսակցութեան ղեկավար Եոսի Սարիտ հրաժարեցաւ իր արժանէն՝ կուսակցութեան կրած ամօթալի պարտութեան պատճառով:

Յաղթանակ ապահովող կուսակցութիւններ

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱԿ

ՏԵՆՔԹԱՇ ԿԸ ՆՍԵՄԱՑՆԷ ՄԱԿԻ ԵՇԴԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԶՅԱՐԳԵԼՈՒ ԶԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

ՄԱԿԻ կողմէ ճշգրտած Փետրուար 28ի ժամկէտը չյարգելը «աղէտ» մը պիտի չըլլայ, յայտնած է թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ երէկ:

Ան «Անատոլու» լրատու գործակալութեան յայտնած է, թէ թուրք կիպրացի ժողովուրդը ունի փոխընտրանքներ:

Տենքթաշ եւ Կիպրոսի նախագահ Կյաֆթոս Քլերիտէս այս ամսուան սկիզբը բանակցութեանը սկսած են կղզին վերամիացնելու ՄԱԿի ծրագրին առնչուելով:

ՄԱԿ կ'ուզէ, որ մինչեւ Փետրուարի վերջ համաձայնագրի վերջը չըլլայ: Շարք՝ էջ 10

ՎԱՂՈՒԱՆ ՄԵՐ ԹԻԻԻՆ ՀԵՏ «ԱԶՏԱԿ»Ի ՑՐՈՒԻՉՆԵՐԷՆ ԵՒ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԷՆ ԿՐԱՎՔ ԱՊԱՀՈՎԵԼ «ԱԶՏԱԿ ԱՍՍԱԹԵՐԹ»

ԱՎՍՍԱԹԵՐԹ

ԱԶՏԱԿ

2010 ՄԵՍԿ ԹԻՐԱՎԱՆ ԸՆԿՐՈՒՄ ԵՒ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԷՆ ԱՊԱՀՈՎԵԼ

ԱԶՏԱԿԻ ՑՐՈՒԻՉՆԵՐԷՆ

2010 ՄԵՍԿ ԹԻՐԱՎԱՆ ԸՆԿՐՈՒՄ ԵՒ ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԷՆ ԱՊԱՀՈՎԵԼ

ԱԶՏԱԿՅԻՆ - ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՆԻԹԵՐՈՒ ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԵԱՄԲ: 16 ԳՈՒՆԱՌՈՐ ԷՁ: ՍԱԿ՝ 3000 Լ.Ո.

րէն է կեդրոնի - աջ ոչ կրօնական Շինուտի Կուսակցութիւնը, որ վեցէն 15ի բարձրացուց արժանութիւնը՝ գրեթէ մօտենալով Աշխատանքականներու: Շարայեղ կրօնական Շաս Կուսակցութիւնը պարտութիւն կրեց, 17էն 11ի իջեցնելով արժանութիւնը:

Շարոն, որ կրնայ ծայրայեղ աջի սեղմ կառավարութիւն մը կապուել, կոչ ուղղեց կեդրոնի կուսակցութիւններուն՝ միանալու կառավարական ընդարձակ ընկերակցութեան մը: Շարոն, որ թէլ Աւիւի մէջ կ'արտասանէր յաղթանակի ձառք, կոչ ուղղեց սիոնական բոլոր կուսակցութիւններուն՝ միանալու ապագային միասնականութեան կառավարութեան մը: Աշխատանքական Կուսակցութեան ղեկավար Ամրամ Միցնա անմիջապէս հակադարձեց՝ մերժելով մասնակցելու Շարոնի կառավարութեան: Շինուտի ղեկավար Թոմի Լափիտ սակայն աւելի դրական մօտեցում որդեգրեց՝ յայտնելով, որ իր կուսակցութիւնը պատրաստ է ժամանակակիտ կերպով մասնակցելու կրօնական կուսակցութիւններ ալ: Շարք՝ էջ 3

ՃՈՐԾ ՊՈՒՇ Կ ՈՒԶԷ ԱՄԷՆ ԳՆՈՎ ԶԵՐԲԱԶԱՏԻԼ ԻՐ ՄՂԶԱՒԱՆՁԷՆ՝ ՄԱՏՏԱՄ ՀԻԻՄԷՅՆԷՆ

Ծերակոյտին եւ ներկայացուցիչներու Տան անդամներուն դիմաց արտասանած տարեկան իր ձեռքի մէջ, Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ խոստացաւ նոր փաստեր հրապարակել Իրաքի հաւաքական քանոնի վէտերու պահեստին մասին: Այս յայտարարութեամբ կը թուի, թէ Պուշ վճռած է անպայման պիտուրակներ գործողութեան մը ձեռնարկել Իրաքի դէմ: Յիշեալ խոստումը կատար-

ւած է հանդարտեցընելու համար դաշնակիցները, որոնք ջոշահանքի փաստերը կը պահանջէն Կորպորացի կանգնելու համար Իրաքի դէմ պատերազմի մը: Իր խօսքին մէջ, Պուշ սպանաց ամերիկեան Կինուորական ամբողջ ուժը ի սպաս դնել Սատամ Հիւսէյնը իշխանութեան հեռացնելու աշխատանքին: Ան աւելցուց, որ արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Փետրուար 5ին Ապահովու-

թեան Խորհուրդին պիտի ներկայացնէ փոխանցելու համար Իրաքի արգիլուած վէտերուն մասին ցարդ գաղտնի պահուած տեղեկութիւններ: Պուշ ըսաւ նաեւ, որ փաստերը պիտի հաստատեն, թէ Պաղտատ իսլամիստ է թիւ 1441 բանաձեւը՝ քննիչներէն գաղտնի պահելով վէտերու ծրագրին մասին տեղեկութիւններ: Միացեալ Նահանգներ ճշտումի կ'են-

Շարք՝ էջ 10

Ի. ԱԼԻԵԻ ՊԻՏԻ «ՄԵՐԿԱՑՆԷ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՐՁԱԿՈՂԱՊԱՇՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի վերջերս Սթրասբուրգի մէջ կայացած նստաշրջանին ազգայնացման պատուիրակութեան ղեկավար Իլհամ Ալիեւ (Ազըրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի մրիքին) ընտրուած է Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի

փոխ նախագահ: Ան այսօր պիտի եղած է խորհրդարանական վեհաժողովի նախագահ Փիթըր Շիբլըի 18 տեղակալներէն մէկը: Ազըրպէյճանական պատուիրակութեան անդամ Սամիտ Սէյիտով ընդգծած է, թէ Իլհամ Ալիեւի ընտրութիւնը ոչ միայն Լեռնային Ղարաբաղի առնչուող հարցերուն, այլեւ Հայաստանի

կորիզային կայանին վերաբերող խնդիրներու արծարծման առիթ կ'ընծայէ: Իր կարգին, Իլհամ Ալիեւ յայտնած է, թէ իր ընտրութիւնը վկայութիւն մըն է Ազըրպէյճանի եւ Եւրոպական խորհուրդի միջեւ բարձր մակարդակի յարաբերութիւններու գոյութեան: Ան նշած է, որ մտադիր է օգտագործել «Իրեն ընծեռուած առիթները» Ազըրպէյճանի պետական շահերուն պաշտպանման, եւ առաջին հերթին՝ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման համար: «Մենք փաստացի ձեռք պիտի մերկացնենք Ազըրպէյճանի դէմ Հայաստանի յարձակողապաշտ քաղաքականութիւնը եւ անոր հետեւանքները: պիտի պարզենք ազերի գաղթականներու ծանր վիճակը եւ այս տագնապին արդար լուծման ուղղութեամբ ջոշուրդը Հայկական կողմի միտումը», դիտել տուած է Ազըրպէյճանի «ապագայ» ղեկավարը:

ԱՆԳԱՐԱ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ «ԲԱՐԵՓՈՒՆԵԼՈՒ» ՔԱՅԼԵՐՈՒ ԿԸ ԴԻՄԷ՛...

ԱՆԳԱՐԱ, 29 (ԱՅՓ).- Թուրքիա Չորեքշաբթի օր միջոցառումներ յայտարարած է՝ բարեկարգելու համար իր դատական դրութիւնը, որ քննադատուած է Եւրոպական Միութեան կողմէ, իբրեւ մէկը խոչընդոտներէն, որոնք կ'արգիլեն երկրին անդամակցութիւնը: Կառավարութիւնը բանաձեւ մը մշակած է ու պայն խորհրդարանի որովհետ շրջանային վերադատ ատեսներու հաստատումին համար, Անգարայի մէջ վերադատ ատեսներին քննարկած հարցերու բերել նուազեցնելու համար եւ գործընթացները արագացնելու շրջանային մակարդակի վրայ, ըսած է փոխ վարչապետ Ապտիլլաթի Սենէր: «Ուշացած արդարութիւնը արդարութիւն չէ», ըսած է ան: Շարք՝ էջ 3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՔԱՌԵԱԿԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱՅԱՑԱԻ ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԻ ՄԷՁ



Նախագահներ՝ Փոլսի Եւ Զոչարեան Կը խօսակցին, Մից Զուլմա՛ կեդրոնը կը հետեւի

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆՈՒՄԻ ԿԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան, որ մասնակցեցաւ ԱՊՀի վեհաժողովին, երեքշաբթի օր Քիբեի մէջ նաեւ մասնակցած էր Կովկասեան Քոնգրեսի Լեզնիստ Բուհիոյ եւ Ուրբանիոյ նախագահներ՝ Վլատիմիր Փուսին եւ Լէոնիտ Բուհիստ Կոստանուրի, որ տնտեսական կապերու խորացումը կը բխի անդամ երկիրներու ազգային շահերէն:

ընթացած է փոխընդունման միջոցով մէջ: Գրոմովի համաձայն, բաւական երկար գրոյց մը տեղի ունեցած է Հայաստանի եւ Ազըրպէյճանի նախագահներուն միջեւ:

Քիբեի մէջ նախագահ Քոչարեան նաեւ հանդիպում ունեցած է վրացի պաշտօնակիցին հետ: Ռոպէրթ Քոչարեան եւ Էտուարտ Շեւարտնաձէ քննարկած են շրջանային իրադրութիւնը եւ առկա տագնապներու լուծման ընթացքը: Երկու երկիրներուն ղեկավարները անգրադարձած են տնտեսական փոխգործակցութեան:

ԱԿՆԱՐԿ

ԳԼԽԱԻՈՐ ԵՐԱՇԽԻՔ ԵՒ ԱՆՓՈՒՍԱՐԻՆԵԼԻ ԳՈՐԾՈՆ

Հայկական բանակի օրուան տօնակատարութիւնները առիթ եղան, որ Հայաստանի Հանրապետութեան իշխանութեան բարձրագոյն հեղինակութիւնները ուղերձներով, յայտարարագիրներով, շնորհատրանսքներով թէ հարցապրոցներով արժեւորեն հայկական բանակին դերն ու առաքելութիւնը: Արդէն 11 ամեայ կենսափորձ ունեցող բանակի անցած ուղին առաջին բանակայիններու հաւաքագրման գործընթացով, հայրենիքի սահմաններէն ներս ամէն ոտնձգութիւն կանխելու փաստով, արցախեան պատամարտի ամբողջ տեղութեան նրաքննիչը իր բերած մասնակցութեամբ այսօրուան իրադրութեան գնահատման ժիրին մէջ կը շարունակէ մնալ եւ շրջանային կայունութեան եւ մանաւանդ՝ հայրենիքի անվտանգութեան գիշարը երաշխիքը:

Ռազմական հարցերու ոչ - հայ մասնագէտներու եւ Կինուորական փորձագէտներու իսկ հաստատումով, հայկական բանակը կը շարունակէ կրել շրջանային առումով ամէնէն մարտունակին բնութագրումը:

Ճիշդ է, որ ռազմական տարբեր բաժանումներու համապատասխան սարքաւորումները, Կինուորական ճարտարարուեստի արտադրողական տարբեր ոլորտները, բանակի պահպանման եւ Կինուորական համակարգը վարելու արհեստավարձ անձնակազմն ու անոնց համապատասխան քաղաքային պատրաստութիւնը իրականացնողներն են բանակի մը առաքելութեան յարցը: Սակայն, այս բոլոր նախադրեալները կ'իմաստաւորուին, երբ կը բացակայի գաղափարական դաստիարակութիւնը, հայրենիքին անսակարկ ծառայելու վճարակամութիւնը: Գաղափարական ու գիտակցական այս մօտեցումն է, որ կը ստեղծէ մարտունակ ու պատուաբեր գնահատումներու կ'արժանացնէ հայկական բանակը:

Վերանկախ հայրենիքը բացարձակ արժեք դաւանելու եւ այդ էականով ու ամէն գնով պայն անվտանգ պահելու յանձնարար մօտեցումն է, որ մեր հայրենիքին այսօրուան բարձրագոյն հեղինակութիւններուն մօտ պետական ուղեգրի վերածած է բանակին նկատմամբ կիրարկուած միջոցներու համակարգումը: Պետական այս ուղեգրի ճիշդ ու առողջ ընկալումը՝ հայ պիտուորին կողմէ հայկական բանակը վերածած է նախագահ Ռոպէրթ Քոչարեանի կամ պաշտպանութեան փոխ նախարար Արթուր Աղաբէկեանի արժեւորումներով՝ հայ ժողովուրդին ապահովութեան գիշարը երաշխիքին եւ շրջանին կայունութեան անփոխարինելի գործունին: «Ա.»

ՆԱԽԱՐԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Կառավարությունը երեկ լեռնաշղթայի գումարանց իր ժողովը, նախագահությամբ Կ. Էմիլ Լախուտի և ներկայությամբ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի: Ժողովին բացակայեցավ պողոթնապետական նախարար Սլեյման Ֆրեմիկ: Նախագահ Լախուտի և վարչապետ Հարիրիի միջև ղոնփակ հանդիպումը տեղի չունեցավ:

Ժողովին օրակարգը կը բաղկանար 65 կետեր: Քննարկուեցան անապահովներու վերաշինությունը Թրաքիայի, որ կ'արժէ 550 միլիոն տոլար, նաև հանգիստի շրջանին մէջ գտնուող կառույց մը վերաշինութեան և բարգաւաճման խորհուրդին յատկացնելու Թրաքիայի, ինչպէս նաև թշուառներու հեռաձայնի ապահովականացման թղթաբարր, որ պիտի քննարկուի յառաջիկայ ժողովի ընթացքին աճուրդի և նուազուրդի իր բոլոր մանրամասնութիւններով:

Ժողովի ընթացքին նաև քննարկուեցան ընկերային ապահովագրութեան օրէնքներու փոփոխութիւնները, ինչպէս նաև հանգստեան կոչուելու եւ ընկերային պաշտպանութեան երկու այլ օրագիրներ, որոնք լոյս տեսան ընկերային ապահովագրութեան մարպիին յատուկ նախարարական յանձնախումբին, որուն կը նախագահէ փոխ վարչապետ Իսմայիլ Ֆարիսը:

Ժողովը քննարկեց նաև վարչական նշանակումներու թղթաբարր, որուն մաս կը կապուի Տահրէյ Պաշէք հիւանդանոցի նախագահին, ընդհանուր տնօրէնին, տնօրէն խորհուրդի անդամներուն և հիւանդանոցին մէջ կառավարութեան ներկայացուցիչին, ինչպէս նաև արդարութեան խորհուրդին մէջ խորհրդականներու նշանակումները:

ՅՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ՝

ԵԼԵԿՏՐՈՎԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԽՆԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Լիբանանի էլեկտրականութեան ընկերութիւնը երեկ մշակեց նոր ծրագիր մը, որուն հիման վրայ էլեկտրականութեան հոսանքի խնայողութեան ժամանակացոյց մը պիտի կիրարկուի: Խնայողութեան պատճառաբանութիւն տրուեցաւ վառելիքի արժեքներու բարձր սակերը: Ընկերութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, թէ միջազգային շուկաներուն մէջ վառելիքի արժեքներու շուկայի ընկերութեան ընկերութեան ծախսերը կը բարձրացնեն 70 առ հարիւրով, եւ նկատուի ունենալով, որ Լիբանանի մէջ ընկերութիւնը գիշատարաբար վառելիքի արժեքը կը գնէ վարկերու միջոցով, որոշուեցաւ արտակարգ միջոցառումներու դիմել:

Նոր միջոցառումներու հիմամբ, ընկերութիւնը պիտի կարենայ ամսական շուրջ 11 միլիարդ 1. ոսկիի խնայողութիւն մը կատարել, սկսեալ 20 Յունուար 2003էն:

Հետեւաբար լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ էլեկտրականութեան հոսանք պիտի հայթայթուի օրական 20 ժամ. վարչական Պէրլորթը բացառութիւն է, որովհետեւ մայրաքաղաքը 24 ժամ էլեկտրականութիւն պիտի ունենայ:

Ելեկտրականութիւնը պիտի անջատուի օրական չորս ժամ եւ պիտի տարուի քաղաքային տնտեսան ժամը 6:00էն երեկոյեան ժամը 10:00ի միջեւ:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**
Այսօր՝ Հինգշաբթի. 30 Յունուարի կտորուան ժամը 12:00ին կընքուի լսելի մեր հարցազոյցը Թրիփոլի Ազգ. Նուպարեան-Խրիստեան միջնակարգ վարժարանի տնօրէն ՎԱՅԷ ՀԱՐՍԱՆՍԱՐԵԱՆԻ հետ՝ Թրիփոլի հայ գաղութին մասին:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Այս տարի Ս. Սարգիս տօնը կը հանդիպի Կիրակի, 16 Փետրուարին. ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս պիտի կատարուի մատաղօրհները: Բոլոր այն հայրեակցները, որոնք Ս. Սարգիս տօնին առիթով ուխտ ունին եւ կը փափաքին մատաղցու ոչխար նուիրել, թող հաճին կապ պահել Ս. Սարգիս եկեղեցւոյ թաղակազմութեան անդամներուն հետ՝ հեռաձայնելով 01-259861 թիւին եւ կամ անձամբ ներկայանալ գրասենեակ, ամեն օր, բացի Ծաբթ օրերէն՝ ժամը 9:00էն 12:30:

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱՀԱԶԴ
Տէր եւ տիկին Յարութիւն եւ Արմին Ռուսեայեան եւ զուստոր՝ Արին
Տէր եւ տիկին Գրիգոր Ռուսեայեան եւ զուստոր՝ Տէր եւ տիկին Կարապետ Ռուսեայեան եւ զուստոր՝ Տէր եւ տիկին Եղուարդ Ե. Արաքսի Խաչերեան եւ զուստոր՝
Գալիանեան ընտանիք
Ռուսեայեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գովեն իրենց հօր, մեծ հօր, աներոջ եւ Հարազատին՝
ԱՐՄԵՆ ԳԱՍՊԱՐ ԹԻՒՐԻՒԹԵԱՆԻ
(Ծնեալ՝ Ամասիա, 1908ից)

ՉՕՐ. ԼԱՇՈՒՏ ԽՈՐՀՈՒՐԴԱՆԻ ՆԱԽԱԳԱՇԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՐԿԻՐԸ ՅՈՒՂՈՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Նախագահ Կ. Էմիլ Լախուտ երեկ Պատասխանի մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորիին, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը եւ շրջանային քաղաքական իրադրութիւնները:

Շուրջ մէկուկէս ժամ տեւողութեամբ հանդիպումէն ետք Պրորի յայտնեց, որ նախագահ Լախուտի փոխանցած է խորհրդարանի լիազուարդ փաստերուն մասին տեղեկութիւններ: Պրորի ըսաւ նաև, որ նախագահ Լախուտի հետ մանրամասնօրէն քննարկած է շրջանային վարչապետութեան յարցերը, յատկապէս

Իրաքի հարցը եւ իւրաքանչիւր ընտրութիւնները: Ան աւելցուց, որ ընտրութիւններուն արդիւնքները յստակ էին եւ չարմացուցին ռեւէ մէկը. «սակայն ուշագրաւը պատերազմին մասնակցելու մասին վարչապետ Արիէլ Շարոնի յայտարարութիւններն էին»:

Պրորի յայտնեց նաև, որ նախագահ Լախուտի մօտ արժարժած է Փողսկրեայ Ափունքի լիբանանեան համայնքին հարցը՝ նկատի ունենալով, որ հոն ապրող լիբանանցիներուն թիւը կը հասնի 50 հազարի եւ անոնք ունին տնտեսական բարձր վիճակ:

ՄԱՍԻ
«ՈՒՇԱՅԱԾ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ ԶԷ»
Թուրքիա ձեռնարկած է իր դատական դրութիւնը բարեկարգելու քայլերու՝ նկատի ունենալով, որ Անգարա կը հետապնդէ Եւրոպական Միութեան անդամ դառնալու երապը, եւ Եւրոպա գլխաւոր խոչընդոտներէն մէկը կը համարէ Թուրքիոյ անկազմակերպ, նախնական եւ Օսմանեան կայսրութեան օրերը յիշեցնող դատական համակարգը:
Թուրք վարիչները՝ յատկապէս Արդարութեան եւ Բարգաւաճման Կուսակցութեան իշխանութեան հասնելէն ի վեր, ոգի ի բոխ լծուած են Անգարայի «երպիս» դէմ ցցուած արգելքները չքացնելու աշխատանքին: Ասոր յատկապէս փաստը հիւսիսային կիպրոսի ղեկավար Ռաուֆ Տենքթաշի նկատմամբ պաշտօնական Անգարայի որդեգրած քաղաքականութիւնն է, որ ամէն արեւմտագիւղի կը փոխուի՝ շփոթի մատնելով նոյնիսկ Տենքթաշը, որ կորսնցուցած է Թուրքիոյ կեցւածքներուն ետին իսկական կացութիւնը գնահատելու իր «կարողութիւնը»:
Հարցը ահիկա չէ սակայն:
Թուրքիոյ փոխ վարչապետ Ապտիլլաթիֆ Սենէրը՝ ակնարկելով դատական համակարգին մէջ ձեռնարկուող բարեկարգումներուն, կ'ըսէ. «Ուշացած արդարութիւնը արդարութիւն չէ»:
Նման բնութագրում, երբ թուրք մըն է կատարողը, ծիծաղելիէն աւելի ամօք մըն է՝ ուղղուած արդարութիւն, հաւասարութիւն, խաղաղութիւն ցանկացող ժողովուրդներուն:
Եթէ թուրք պատասխանատուին համար «ուշացած արդարութիւնը արդարութիւն չէ», ուրեմն Հայկական Յեղափոխութեան ցարդ անլոյծ դատական թղթաբարի կարգավիճակը ինչ է. ուշացում, թէ՞ ուրացում:
Եթէ ահիկա հարց տանք Սենէրի, պիտի ըսէ՝ արդէօք. «Ուշացած է արդարութիւնը. ուրեմն արդարութիւն չէ»:
Վստահաբար պիտի չըսէ. ի վերջոյ թուրք չէ՞:
Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ՈՒԱԼԻՏ ԺՈՄՊԼԱԹ ԲՈՐԱՅԹԷՄ ԱՅՑԵԼԵՑ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երեկ Քրոնիկէ մէջ ընդունեց Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ռայիտ Ժոմպլաթը, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը:

Վարչապետ Հարիրիի այցելեց նաև ընկերային ապահովագրութեան եւ հանգստեան կոչուելու օրէնքներու յատուկ շրջանային խորհրդաժողովին մասնակցող ընդհանուր տնօրէններուն պատուիրակութիւնը, որուն մաս կը կապուի Լիբանանի Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի ընդհանուր

տնօրէն Մոհամէտ Քարաքի, որ յայտնեց, թէ պատուիրակութիւնը վարչապետ Հարիրիի ներկայացուցած է խորհրդաժողովին միջոցով, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը:

Վարչապետ Հարիրի ընդունեց Քարաքիի երեսփոխանները՝ Տարիտ Մարի, Տարիտ Մարի եւ Սելիմ Սաատը:
Հանդիպումէն ետք Վարչապետ Հարիրի յայտնեց, որ վարչապետ Հարիրիի համաձայն, գտնուած է Քարաքի մէջ ընկերային տնօրէններուն լուծումը,

եւ թէ ան վերաշինութեան եւ Բարգաւաճման Խորհուրդին պահանջած է անմիջապէս սկսելու Քուրայի մէջ աշխատանքներուն՝ պատասխանելու համար մանրամասն օրագիր մը շրջանի կարիքներուն մասին:
Վարչապետարանի այցելուներէն եղան նաև Լիբանանի մէջ Եմէնի դեսպան Ահմէտ Ապտալլա Պաշա, որ վարչապետ Հարիրիի հետ քննարկեց Լիբանան - Եմէն երկկողմանի յարաբերութիւնները:
Նշենք, որ վարչապետ Հարիրի այսօր պիտի մեկնի Վատիկան, ուր պիտի ընդունուի Յովհաննէս Պողոս Բ. պապին կողմէ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԿԵՆՍՈՒՈՐՏԻ նախարարութեան ընդհանուր տնօրէն Պերճ Հաճեան երեկ Լիբանանեան Համալսարանի քաղաքական գիտութեան եւ իրաւաբանութեան բաժանմունքին մէջ դասախոսութեան մը ընթացքին շեշտեց, որ Լիբանանի մէջ կենսոյոյրտի բաղաքականութիւնը կը մնայ տեսութիւններու սահմանէն ներս, մինչ կենսոյոյրտի նախարարութեան հիմնական դերը կը կայանայ կենսոյոյրտի սպառնացող պահանջներու վտանգներու առաջընթացներու աշխատանքին մէջ:
● ՀԱՆՐՕԳՈՒՏ ԶԻ-

նութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժմայ Միքայիլ յատուկ խորհուրդի կողմէ կ'արժեքները կը մնայ տեսութիւններու սահմանէն ներս, որուն ներքին պիտի գտնուին յորդանանցի, սուրիացի եւ կիպրացի իր պաշտօնակիցները:
● ՊԵՐՏՈՒԹԻ միջազգային օդակայանի աղբիւրներ յայտնեցին, որ մշակուած է ուշացած ճամպրուկներու ստանձնումի նոր դրուիւմ մը, որուն հիմամբ, խնդրող առարկայանհատի մը պայուսակը կը ստացուի ապահովութեան գրասենեակին միջոցով. իսկ նախքան պայուսակին ստացումը մաքսատան պատասխանատուներուն կողմէ պայուսակը կը խուսաբարկուի:
● ՅԱՄԱՔԱՅԻՆ փոխադրութեան հանրային փոխադրամիջոցներու վարորդներու պահանջները շրջաններու սենթիւնները երեկ իրենց համադաշնակցութեան կեդրոնատեղիին մէջ գումարեցին ժողով մը համադաշնակցութեան նախագահ Ապտիլ Էմիր Նաճեթի նախագահութեամբ: Անոնք քննարկեցին պենսիոնի սղութեան հարցը:

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ
Այսուհետեւ «Ազգակ» կարելի է գտնել «Սփինի» հրատարակչի մասնաձեւով մէջ գործող «Մալէս Պուքշափ»-ի մօտ:

ԱՐՑԱԿԻ ԾԹԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆԾԻՆ
● Ամանորի առիթով, Ազգային մը 300,000 Լ. ո.

ASHJIAN TOURS
Օդանւոր երբ ու դարձի տոմսերու գեղուած գիներ եւ 2003ի շրջապայտներ
Vienna - Zurich - Rome - Warsaw - Milan
Budapest - Frankfurt - Moscow
Միայն 223\$, իսկ Paris 273\$
Հայաստան 220\$, Կիպրոս 89\$
Կիպրոս՝ 12-16 Փետր. St. Valentine, Ս. Սարգիսի եւ Ասիայի տներու առիթով
CHARM EL SHEIKH 10-14 Փետր. 220\$
Հայաստան՝ 2-9 Մայիս միայն 333\$, իսկ երկու շաբաթ միայն 450\$
Ս. Չարիկի եւ Ապրիլ 24ի առիթներով առաջին անգամ ըլլալով 19-24 Ապրիլ 5 օր շեղ պանդոկներ՝ լման պտուղներով Հայկ, Տր 20ր, Մարկաւտ, Հալիէ, Գամբիլ, Թմոն, եւ Դամասկոս, 120\$-էն սկսեալ: Վճարման դիւրութիւններ:
Կարիքը ունենալ շրջան պաշտօնեաներու, շահաբաժնեւ եւ նաեւ իրենց տուներու մէջ հեռաձայնով դրամ շահի փափաքողներու:
Արձանագրութիւն՝
ASHJIAN TOURS
Հեռ. 01-240654, 03-233976 եւ 01-261177:
Sales Agent for ARMENIAN AIRLINES

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սիրվարդ Մաթոյեան
Տէր եւ տիկին Համազասպ Մաթոյեան եւ զուստոր
Տէր եւ տիկին Յակոբ Սարգիսեան եւ զուստոր
Տէր եւ տիկին Յակոբ Ազիբեան եւ զուստոր
Տէր եւ տիկին Գրիգոր Թաթոյեան եւ զուստոր
Տէր եւ տիկին Սարգիս Նարիկեան եւ զուստոր
Տէր եւ տիկին Ստեփան Մաթոյեան եւ զուստոր
Տէր եւ տիկին Յակոբեան ընտանիք
Պուշտուկեան ընտանիք
Իշխանեան ընտանիք
Քելէշեան ընտանիք
Պէսէրէքեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ եւ Հարազատին՝

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՈՒ
● Ընտանիքի հայր մը պահակութեան գործ կը փնտռէ: Հեռ. 01-872479:

ՅԱԿՈՒ ՄԱԹՅԵԱՆԻ (Ծնեալ՝ 1931ից)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 29 Յունուար 2003, առաւօտեան ժամը 1:00ին, իր բնակարանին մէջ:
Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 29 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցեային մարմինը փոխադրուեցաւ Պերճ Հաճեանի Ազգային գերեզմանատունը:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապար:
● Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային բնակարանը, Պերճ Համուտ, Արաքս փողոց, «Սենթր Մարիս» թաղ, Հինգշաբթի 30, Ուրբաթ 31 Յունուար եւ Ծաբթ 1 Փետրուարին:

● Ընտանիքի հայր մը պահակութեան գործ կը փնտռէ: Հեռ. 01-872479:
ԿՈՒՂՈՒԻ
● Շրջուն վաճառող մը, պառտկալի համար: Հեռ. 03-349300 եւ 03-290777:
ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
● Տիկին Մարի Ժամկոչեան եւ զուստոր, տիկին Արուսեակ Կարապետեանի մահուան առիթով, 100 տոլար՝ ԶԱՄԼԻ Երանցոյցին:
ԿՈՒՂՈՒԻ
● Ամերիկեան էր քոնտրոլ ընկերութիւնը մը (Արեւմտեան Պէրլորթ) կարիքը ունի քարտուղարուի մը 3 տարուան փորձառութեամբ. անգլերէն/արաբերէն լեզուով համակարգիչ գիտնալը պայման: Հեռ. 03-816189 կամ 01-369052 երեկոյեան:
● Նաեւ կ'ուզուի փորձառու թեքնիկներ ընթացողները գտնողները եւ նորագոյները: BT ունենալը մախրնորիկ է: Հեռ. 01-378801-5 կամ 03-800601 FAX: 01-378800:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամեն օր առաւօտեան ժամը 9:00էն կտուր ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:
1) Հիւանդանոցային առողջապահական (ուկարա եւ պետական հիւանդանոցային բուժում):
2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):
3) Տանը եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
4) Գաղաքականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
5) Բնակարանային հարցերու նախարարութեան (խըժ) դիմումներ:
6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
7) Զաղաքագիտութիւններու հետ կապուած հարցեր:
8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (ԱմՏ Էլ Ամ) հետ կապուած հարցեր:
Դիմողները պիտը եւ ներկայանան «Ճաղոցեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 թիւերուն:
Այսուհետեւ ամեն Հինգշաբթի առաւօտեան ժամը 9:00էն 11:00 Երեսփոխանական Գրասենեակ ներկայ պիտի ըլլալ Երեսփոխանութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս, որ պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումը:
ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում եւ Սուրիայում Հայաստանի Հանրապետության դեսպանությունները ու Հայկական ՀՀ գլխավոր հիւպատոսությունները տեղեկացնում են, որ ս. թ. Փետրուարի 19ին առաւոտում 8:00ից մինչեւ երեկոյեան 20:00 տեղի են ունենալու Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները, որոնց նախապատրաստման եւ անցկացման ընթացքում Յորդանանում, Լիբանանում եւ Սուրիայում բնակուող կամ գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են մասնակցել ընտրություններին Հայաստանի Հանրապետության ընտրական օրէնսգրքով եւ Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի որոշմամբ սահմանուած կարգով:

Լիբանանում, Սուրիայում եւ Յորդանանում Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները նախապատրաստում, կազմակերպում եւ անցկացնում են Հայաստանի Հանրապետության դեսպանությունները Դամասկոսում եւ Պէյրութում, ինչպէս նաեւ ՀՀ գլխավոր հիւպատոսությունները՝ Հայկական:

Լիբանանում եւ Սուրիայում Հայաստանի դեսպանություններում ու Հայկական ՀՀ գլխավոր հիւպատոսությունում հաշուառուած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ներառուած են ընտրացուցակներում, որոնց կարելի է ծանօթանալ Հայաստանի վերոյիշեալ դիւանագիտական ներկայացուցչություններում եւ հիւպատոսական հիմնարկում: Լիբանանում, Սուրիայում եւ Յորդանանում բնակուող, կամ գտնուող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք ներառուած չեն յիշեալ ցուցակներում, ընտրություններին մասնակցելու համար հրաւիրուած են Պէյրութում եւ Դամասկոսում Հայաստանի դեսպանություններ, ինչպէս նաեւ Հայկական ՀՀ գլխավոր հիւպատոսություն ընտրողների ցուցակներում ընգրկուելու յայտ ներկայացնելու համար: Յայտում պետք է նշուի ընտրողի ազգանունը, անունը, ծննդեան օրը, ամիսը, տարին, անձնագրի համարը, ծամանակաւոր եւ մշտական բնակութեան վայրերը (հասցէները):

Ստացուած յայտերի հաշուառման հիման վրայ կազմուելու են ընտրողների վերջնական ցուցակները:

Լիբանանում եւ Սուրիայում Հայաստանի դեսպանություններում ու Հայկական ՀՀ գլխավոր հիւպատոսությունում կազմաւորուելու են տեղամասային ընտրական կենտրոններ, ինչպէս նաեւ տեղամասային ընտրական յանձնաժողովներ:

Լիբանանում, Սուրիայում եւ Յորդանանում Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունների քուէարկուծութիւնը անց է կացուելու Հայաստանի Հանրապետության Ընտրական օրէնսգրքով սահմանուած կարգով՝ տեղամասային կենտրոններում, որոնք գտնուելու են Պէյրութում, Դամասկոսում եւ Հայկական ՀՀ դիւանագիտական ներկայացուցչություններում եւ հիւպատոսական հիմնարկում հետեւեալ հասցէներով՝

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍԱՊԱՆՈՒԹԻՒՆ
Հասցէ՝ 28 Ռի Տէ Ժասմէն, Մթայէպ
Հեռ. (04)408860

ՍՈՒՐԻԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍԱՊԱՆՈՒԹԻՒՆ
Մեզպէ Շարքիա, Շաֆիի փողոց 13,
Դամասկոս
(011)6130952

ՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՊԱՏՈՍՈՒԹԻՒՆ
Էլ Քաւաքիթի 4, Տահա Հուէյն 12,
Հայէպ
(021)2687240

ՀԱՅՃԱՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԱՐԿԵՍԱՎԱՐԹՆԵՐՈՒ ՄՈՒԹԻՒՆ (ՃԱՐՏԱՐԱՎԵՏՆԵՐ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ)

ՍԵՍԻՆԱՐ Նիւթ՝

«ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԸ ՄՏԱՀՈԳՈՂ ՀԱՐՑԵՐԸ, ՄԱՄՆԱԳԻՏՆԵՐՈՒ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ»

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Յունուար 2003, երեկոյեան ժամը 8:00ից, Կալկազեան համալսարանի սրահից մէջ:

ՇՐԱԲԵՐ

ԴԵՍՊԱՆ ՄԻՍԹՐԵԹԱ ԱՅՏԵԼԵՑ ԹԱՐՄՈՒՆԻ ՊԱՏՐԱՐԵՆ

Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Ֆրանքո Միսթրեթա Երկուշաբթի, 27 Յունուարին այցելեց հայ կաթողիկէ համայնքի Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարքին Չմմտի մէջ:

Հանդիպումին խօսակցութեան նիւթ դարձաւ շրջանային կացութիւնը՝ Իրաքի դէմ պատերազմի մը մտավախութեան լոյսին տակ:

Իտալիոյ դեսպանը նաեւ լսեց Թարմուհի պատրիարքին փոխանցած տեղեկութիւնները՝ Լիբանանի հայ կաթողիկէ համայնքին մասին:

Միւս կողմէ, Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարք այցելութիւն մը տուաւ Անտիոքի ատրի կաթողիկէներու Իգնատիոս Պետրոս Ե. պատրիարքին, որուն հետ քննարկեց երկու համայնքները յուլոյ հարցեր:

ԼԻԲԱՆԱՆ ԿՐՆԱՅ ՔԱՐԻՒՂ ԱՐՏԱԴՐԵԼ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երէկ յայտնեց, որ Լիբանան կրնայ վերածուիլ քարիւղ արտադրող երկրի մը: «Սփէքթրում» ընկերութեան կողմէ կատարուած նախնական ուսումնասիրություններու համաձայն:

Պայտուն ըսաւ, որ շարք մը ընկերություններ «Սփէքթրում» ընկերութեան պահանջած են ուսումնասիրությունները:

Պայտուն ընդգծեց, որ կրնան սկսիլ Լիբանանի մէջ բնական կապի պեղումներու աշխատանքին: Ան ըսաւ, որ 2003ին Լիբանան անպայման կ'անդամակցի քարիւղ արտադրող եւ քարիւղի պեղումներ կատարող երկիրներու ակումբին, սակայն չէտեղ. որ քարիւղի արտադրութեան գործընթացը գործնական կը դառնայ նուազագոյնը 7 տարի ետք:

Նշենք, որ քարիւղի գոյութեան մասին ուսումնասիրությունները ցոյց կու տան, որ նշեալ բնական հարստութիւնը կը գտնուի Լիբանանի ծովեզերեայ շրջաններուն մէջ:

ԱՆԳԱՐԱ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Ներկայիս թրքական ատեաններու մէջ կան շուրջ 10 միլիոն օրինական պարագաներ եւ դատական իշխանութիւններուն երկուքուկէս տարի անհրաժեշտ է միջին հաշուով, աւարտելու համար պարագայ մը, ըսած է Սենէր:

Տարեկան 500 հազար հարցեր կը դրկուին Անգարայի վերադատ ատեանին, ըստ փոխ վարչապետին:

Թուրքիոյ մասին Հոկտեմբերի իր մէկ տեղեկագիրին մէջ, Եւրոպական Յանձնաժողովը քննադատած էր թրքական դատական դրութիւնը:

ԻՍՐԱՅԷԼ ԸՆՏՐԵՑ ՎԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

համախմբող կառավարութեան մը: Լափիտ նախապէս յայտարարած էր, որ պիտի չմիանայ կրօնական կուսակցութիւններ ռեւենցող դաշինքի մը:

Այսպէս ինչպէս կառավարութեան մը կազմութիւնը կը մտահոգէ պաղեստինցիները: Պաղեստինցի նախարար Սաէպ Ուրաբաթ ըսաւ, որ կացութիւնը վատէն աւելի վատը պիտի դառնայ, իսկ խաղաղութեան գործընթացը առկապ պիտի մնայ: Ան նախատեսեց նաեւ վայրագութեան եւ բռնարարներու աւելի զօրաւոր հոսանք մը: Ուրաբաթ աւելցուց, որ Շարունի առաջին վարչապետութեան Սյարրոդանանի կարգ մը շրջանները գրաւուեցան, իսկ երկրորդ վարչապետութեան՝ հաւանաբար կապան պիտի վերագրաւի իսրայէլեան ուժերուն կողմէ:

Իսրայէլի նախագահ Մոշէ Քացաւ կոչ ուղղեց Միջնայի վերատեսչութեան ենթարկուելու Շարունի հետ որեւէ կառավարութեան չմասնակցելու որոշումը, որպէսզի կարելի ըլլայ ազգային միութեան կառավարութեան մը կազմութիւնը:

• ՄՐԱՅԵԱԼ Նա-

հանգներու նախագահ Ճորձ Պուշ խոստացաւ թափ տալ Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ խաղաղութիւն հաստատելու ճիգերուն:

• ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒՐՆԵԱՆ արտաքին քաղաքականութեան գլխավոր պատասխանատու Խաւիէ Սոյանա ըսաւ, որ Իսրայէլի ընտրություններուն արդիւնքը պարտութիւն կը նկատուի խաղաղասէրներու ձեռնարկին համար: Սոյանա աւելցուց սակայն, որ Ե.

Միութիւնը պիտի շարունակէ խաղաղարար ճիգերը:

• ՍՈՒՐԻԱ անկարելի նկատեց ընտրություններն ու անոնց արդիւնքները՝ դիտել տալով, որ իսրայէլացի բոլոր ղեկավարներն ալ նոյն «դրամին» տարբեր երեսներն են:

• ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ մամուլը կը գրէր, որ Շարունի յաղթանակը արհիւսահեղութեամբ պիտի աւարտի. եթէ հաւանութիւն չտայ պաղեստինեան պետութեան մը հաստատման:

ՀԱՅ ՎԱՌՈՂԻԿԷ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ (Շ. Կ. Շ. Ս.)
ՊԱՍՏԻՆԱՐԱԿԱՆ ՅԱՆԶՆԱՆՈՒՄԱԸ
Կը կազմակերպէ՝
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՍԸ
«ԿՐԿՆՕՐԻՆԱԿՈՒՄ - ԿԵՆՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՈՅՎԱԳԻՏՈՒԹԻՒՆ»
LE CLONAGE HUMAIN ET THERAPEUTIQUE
Խօսք կ'առնեն՝
ՀԱՅՐ ԳԻՈՐԳ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՏՈՔԹ. ԳԻՈՐԳ ՍԵՍԵՐՃԵԱՆ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 1 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 7:00ից, Կալկազեան Ս. Խաչ եկեղեցոյ «Պետողեան» սրահին մէջ, Չալքա:

ՇՐԱԲԵՐ

29 Յունուարի

թիւով տեղական մամուլը գլխավորաբար լուսարձակի տակ առած է խորհրդարանի լիազուարդ նիւսը, որուն ընթացքին վաւերացուեցաւ պետական պիտոճէի նախագիծը, իսրայէլեան ընտրություններուն Լիբուտի ապահոված յաղթանակը եւ իրաքեան հարցին վերջին պարագաները:

«Նահար» գրած է, թէ պետական պիտոճէն վաւերացուեցաւ՝ ներառելով 5 առ հարիւրի տուրքը, իսկ բջիջայինի հարցը վերադարձաւ համաձայնութեան գիրկը: Հիւսէյնի ըսաւ. «Լիբանանցիները, պաշտպանեցէ՛ք ձեր իրաւունքները», նշած է օրաթերթը:

«Տիար»-ի համաձայն, խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի կ'ըսէ, թէ փոփոխություններ պետք է տեղի ունենայ քուէարկութեան օրէնքին փոփոխութեամբ:

«Սաֆիր» նշած է, թէ խորհրդարանը փոփոխություններ կը կատարէ պետական պիտոճէին մէջ եւ 78 քուէով կը վաւերացնէ վայն:

Ըստ «Քիֆահ Արապի»-ի, 78 երեսփոխաններ թեր քուէարկեցին պիտոճէի նախագիծին: Հարիւր բջիջային բանակէն կ'ուզէ պարփակել նախարարաց խորհուրդին մէջ: «Պայրաք» գրած է, թէ նախագահ վօր.

Էմիլ Լահուտ կը յայտարարէ, որ արաբական միասնականությունը անհրաժեշտութիւն մըն է եւ կարգ մը տուեալներ կը հաստատեն, որ ներքին միասնականությունը այլընտրանք չունի:

Լահուտ եւ Պրրի կը տեսակցին եւ կը սպասուի, որ համաձայնութիւն գոյանայ կառավարութեան փոփոխութեան շուրջ, իսկ տարակարծությունը ըլլալ անոր թուականի ճշդումին առնչութեամբ:

«Մուսթաքալ»-ի համաձայն, քուէներու մեծամասնութեամբ պիտոճէն վաւերացուեցաւ, իսկ անոր ընդդիմացան Հըպալլան եւ Քորնէթ Շահուանը: Հանդարտութիւնը «հետաձայնի» հարցը՝ հասցուց նախարարաց խորհուրդ, նշած է օրաթերթը:

Իսրայէլեան ընտրություններուն մասին «Սաֆիր» գրած է, թէ ձայնակողներուն պարտութիւն արձանագրեցին, իսկ Շիւնուի Կուսակցութեան արդիւնքները եղան ամենէն կարելի անակնկալը. Իսրայէլ կը քուէարկէ ի պատ Լիբուտի՝ պատերազմը շարունակելու համար:

Ըստ «Նահար»-ի, 9 պաղեստինցի սպանություններ իշխանութիւնը դիտել տուաւ, թէ հարցերը հետզհետէ կը վատարանան: Իսրայէլ կը քայլէ ծայրայեղություն ուղիղն եւ իր ձայնը կու տայ Շարունի եւ խաղաղութիւնը մերժողներուն:

«Տիար» նշած է, թէ, անախընթաց յաղթանակ Լիբուտի, որ պարտութեան մատնեց Աշխատաւորական Կուսակցութիւնը: Պաղեստինեան իշխանութիւնը կը յայտարարէ, թէ իսրայէլացիները պատմական շատ մեծ սխալ մը գործեցին:

Ըստ թերթին, բռնարարները կը հասնին ժեներն եւ չորս պաղեստինցիներ կը նահատակուին:

«Պայրաք»-ի համաձայն, Լիբուտ ջախջախիչ յաղթանակ մը ապահովեց, իսկ Շարուն պիտի գլխավորէ կառավարութիւն մը, որուն մաս պիտի չկազմէ Աշխատաւորական Կուսակցությունը:

«Քիֆահ Արապի» լուսարձակի տակ առած է այն պարագան, որ իսրայէլացիները բռնութիւնը կ'ընտրեն, իսկ պաղեստինեան իշխանությունը աւելի գէշ կացութիւն մը կը նահատակէ: Ըստ թերթին, թէ Ալի Մեքքէն եւ Մետինէն կը պարտարեն իր աշխատանքները՝ ամերիկեան տնտեսութեան նկատմամբ դրական հանգին:

«Սաֆիր»-ի համաձայն, պաղեստինեան հանդիպումը անկարելիութիւններու կը բախի, իսկ Եգիպտոս կը յետաձգէ ձախողութեան յայտարարությունը:

«Նահար» նշած է, թէ Գահիրէ կ'արագացնէ պաղեստինեան երկխօսութեան իր նախաձեռնությունը եւ անոր վերջնական վաւերացումը կը յետաձգուի 4 Փետրուարին:

Իրաքեան հարցին մասին թերթը գրած է, թէ թարթ Ալիպ Քուէյթի հակադարձելը չի բացառու, եթէ յարձակումը հոնկէ սկսի: Ուաշինթըն փաստերը կը ներկայացնէ Ապահովութեան խորհուրդին, իսկ քննիչները կը պահանջեն իրաքացի գիտականները պաշտօնական հարցաքննութեան ենթարկել:

Ըստ «Նահար»-ի, հաստատուելով, որ Մատամ լուրջ եւ վտանգաւոր սպանալիք մըն է Միացեալ Նահանգներու համար, Պուշ ձառ մը կ'արտասանէ ամերիկացիները իր քաղաքականութեան շուրջ համախմբելու համար:

«Սաֆիր»-ի համաձայն, Պուշ իր ձառնի մէջ կ'անդրադառնայ Իրաքի հարցին եւ երկրին տնտեսութեան: Ան կ'ըսէ, «Մատամ կը խախտէ միջազգային որոշումները»: Ըստ թերթին, Մատամ կը վզուցանէ դաւաճանները, իսկ քննիչները կը շարունակեն իրենց աշխատանքը:


Ալիպ յայտարարեց, թէ Քուէյթ կրնայ պատերազմի դաշտ ըլլալ:

«Պայրաք» նշած է, թէ Իրաք խոստացաւ յաւելեալ գործակցությունները կը յայտարարէ, թէ իսրայէլացիները պատմական շատ մեծ սխալ մը գործեցին:

Ըստ թերթին, բռնարարները կը հասնին ժեներն եւ չորս պաղեստինցիներ կը նահատակուին:

«Պայրաք»-ի համաձայն, Լիբուտ ջախջախիչ յաղթանակ մը ապահովեց, իսկ Շարուն պիտի գլխավորէ կառավարութիւն մը, որուն մաս պիտի չկազմէ Աշխատաւորական Կուսակցությունը:

«Քիֆահ Արապի» լուսարձակի տակ առած է այն պարագան, որ իսրայէլացիները բռնութիւնը կ'ընտրեն, իսկ պաղեստինեան իշխանությունը աւելի գէշ կացութիւն մը կը նահատակէ: Ըստ թերթին, թէ Ալի Մեքքէն եւ Մետինէն կը պարտարեն իր աշխատանքները՝ ամերիկեան տնտեսութեան նկատմամբ դրական հանգին:



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երևոյթներ

ՉՄԵՌ, ԱՆՉՐԵՒ, ՅՈՒՐՏ, ԳԵՏԵՐ ՈՒ ԼՃԱԿՆԵՐ՝ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՁ ՈՒ ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ...

Ձմրան առաջին քանի մը կաթիլ անձրեւին հետ Լիբանանի գրեթէ բոլոր շրջաններուն մէջ կը յայտնուին գետակներ ու լճակներ, որոնք չորացած էին անձրեւի բացակայութեան պատճառով: Անձրեւին հետ արդէն այս լճակներուն յառաջացուցած եւ երբեք չանցնող փոսերը կը լեցունին, եւ որքան աւելի երկար տեւէ անձրեւը, այնքան կ'ողողուն փողոցները: Օր մը առաջ երկինքին վրայ ժպտացող լուսինին լոյսով տուն մտած քաղաքացին յաջորդ օրը կ'արթննայ եւ դժուարութեամբ դուրս կ'ելլէ տան դռնէն, որովհետեւ դրան մուտքին գետակ մը կը վազէ...

Քաղաքացիները, յանկարծ կը նկատեն, թէ հակառակ այդ բոլորին՝ տակաւին փոսերը չեն անհետացած, կոյուղիները չեն շինուած եւ վիճակը նոյնն է, ինչպէս՝ նախորդ տարիներուն: Ձմեռը իսկական ձմեռ կը նկատուի քաղաքացիներուն համար միայն այն տան, երբ անձրեւներուն կը յաջորդէ փողոցներուն ջրհեղեղը, որ նշան է, թէ արդէն ձմրան մէջ կը դառնուինք: Լիբանանի բոլոր շրջանները իրենց բաժինը կ'ունենան այս ջրհեղեղէն եւ «կը վայելն» առատ ջուրը, որ միշտ ալ անոնց համար եղած է երեւակայական:



Կանուխ լաւ օր մը սկսելու տրամադրութեամբ ճամբայ ելած լիբանանցիները հարկէն մինչեւ գլուխ թրջուելէ ետք կը նկատեն, թէ ինքնաշարժը եւս ողողուած է ջուրով եւ անոր նստարանները ամբողջութեամբ թաց են: Այս կամ այն ձեւով ինքնաշարժը աշխատանքի է անոր մէջ նստելէ ետք, այս անգամ մայրուղիներուն վրայ լճացած ջուրերուն պատճառով անոր ինքնաշարժը դարձեալ կը մարի, եւ ինք կը մնայ անոր մէջ, մինչեւ որ ժամը ետք, շրջան հասնին կարմիր խաչը, ապահովական ուժերը եւ փորձեն ինքնաշարժներէն դուրս բերել ֆիզիքական ու հոգեկան տագնապ ապրած այդ քաղաքացիները...

Այս բոլորին վրայ կու գայ աւելնալու նաեւ այն պարագան, թէ անիմաստ տեղը հոսող այս ջուրերը ըստ արժանւոյն չեն օգտագործուիր եւ ոչինչի որովհետեւ վերջինը կը նշէ, թէ Լիբանանի մէջ ջուրերու գոյութիւնը բնաւ նորոգութիւն չէ եւ ոչ մէկ ձեւով կարելի է արդարացնել այս ուշացումը...

Իրենց յատուկ տեղը ունին նաեւ փոսերը եւ խորտուրտ ճամբաները, որոնց մէջ հաւաքուած ջուրին պատճառով հետիտն քաղաքացիներուն կօշիկները ջուրով կը լեցունին, կամ անոնք ամբողջութեամբ կը թրջուին իրենց քովէն սուրացող ինքնաշարժներուն սրակած ջուրերուն պատճառով:

Մէկ գիշերուան ընթացքին փոխուող օդը, օրհնութեան նման երկինքէն թափող անձրեւը բնական երեւոյթներ են, եւ ասոնց համար ոչ ոք այսպէս չի, սակայն անբնական է այդ գետակներուն գոյութիւնը շէնքերու եւ խանութներու դռներուն ուստի:

Գիւղացիները անհամբեր կը սպասեն ձմրան գալուստին եւ անձրեւներուն ու ձիւներուն, մինչ քաղաքացիներուն համար անոնք դարձած են տաղտուկ եւ զգուանք պատճառող երեւոյթներ: Մինչ գիւղացին իր բերքերուն համար կ'աղօթէ, որ անձրեւէ եւ առատ ջուր ըլլայ, քաղաքացիները կը մտախոհ մնայ: Այս իրողութիւնը անմիջականօրէն կապ ունի ձմրան շրջանին երկրին մէջ տիրող ենթակառուցային պայմաններուն հետ: Քանի մը ժամ անձրեւելէ ետք, քաղաքի փո-

սկսին փնտրել կոյուղիներ կախարհը՝ նորոգութիւններ կատարելու համար: արդեօք աւելի նպատակաւոր մար եւ օգտակար պիտի չըլլա՞ր, որ նախքան ողողումները այդ աշխատանքները տարուէին եւ քաղաքացիները այս բոլոր տաղտուկէն զերծ մնային եւ անհամ կացութեան չմտնուէին:

Իրենց յատուկ տեղը ունին նաեւ փոսերը եւ խորտուրտ ճամբաները, որոնց մէջ հաւաքուած ջուրին պատճառով հետիտն քաղաքացիներուն կօշիկները ջուրով կը լեցունին, կամ անոնք ամբողջութեամբ կը թրջուին իրենց քովէն սուրացող ինքնաշարժներուն սրակած ջուրերուն պատճառով:

Ձմրան անձրեւն ու ձիւնը ունին իրենց իւրապատու գեղեցկութիւնը ու զբաւշտութիւնը: Բնական պայմաններու տակ պատուհանէն դուրս մտնող անձրեւը իսկական օրհնութիւն մըն է մարդոց համար, ձիւնը իր սպիտակութեամբ հոգի ու միտք խաղաղեցնող երեւոյթ է, սակայն վերջինից պայմաններուն լոյսին տակ, լիբանանցիները կը զրկուին ձմրան վայելքէն եւ անձրեւն ու ձիւնը կը դառնան տաղտուկ երեւոյթներ դժբախտաբար:



երկար ժամանակ խոլոց շինարարական գործեր կը կատարուին, որպէսզի ձմեռը անցնի խաղաղ եւ առանց ջրհեղեղներու: Սակայն, ցաւոյն այն է, որ ամրան շրջանին շինարարութիւններու եւ վերանորոգութիւններու համար փակուած ճամբաներուն եւ երթեւեկի փոխուած ուղիներուն ներքին տաղտուկը կրած

ղոցները կը լեցունին ջուրերով, որոնք երբեմն կը հասնին մինչեւ ծունկ, ջուրերը կը մտնեն խանութներն ու գետնաշարքի տունները՝ մեծ վնասներ պատճառելով: Գետերը կը յորդին եւ կը վտանգեն անոր շուրջ գտնուող բնակարանները եւ երբեմն իրենց հետ կը տանին շարուած ինքնաշարժները: Առաւօտ

Իրողութիւնն ու պատկերը կը կրկնուին ամէնօրեայ գրութեամբ, եւ ոչ ոք կը հետաքրքրուի այս կացութեան առաջը առնելով...

Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ տարուան ընթացքին խանութներն ու տունները մեծ վնասներ կ'ենթարկուին այս անձրեւներուն պատճառով եւ յաւելեալ պատճառ մը կ'ըլլայ, որ ներկայ տնտեսական եւ ընկերային դժուար կացութիւնը աւելի ծանրանայ:

Արդեօք պիտի գա՞յ օրը, երբ անձրեւը դարձեալ օրհնութիւն եւ բնութեան գեղեցկութիւն պիտի նկատուի լիբանանցիին համար...

ՀԱՅ ԱՄԵՏ. ԳՈՒԼԵԾԻ 80 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՌՈՎ

ՃԱՁԻ ՆՈՒԳԱՀԱՆԴԵՍ ԱԿՈ ԹԻՒԹԻՒՆԾԵԱՆԻ ԵՒ ԻՐ ԽՈՒՄԱԻՆ ԿՈՂԱԷ

Շաբաթ, 8 Փետրուար 2003, Երեկոյեան ժամը 8:30-ին
Հայ Աւետ. Ա. Եկեղեցոյ հանդիսարանին մէջ
Սուտքը տոմսով

Տոմսերը ստանալու համար դիմել
ԳԱՐԻՆ ԽԱՍՏ., ԳԵՆՐԳԵՆ ԴԵՊԱՐՏԱՆ (Պուրճ Համմուտ)
ՄԻՍԱ (Քաղքա), MULT-OBJET (Սոգոր)
եւ ԴՊՐՈՑԵՆ (Հեռ. 01/349816)

Նման պարագաներու առջեւ կը գտնուին նաեւ այն արտերը, որոնք ամբողջութեամբ ջուրով կը ծածկուին եւ ցանուած բերքը կ'ողողուի:

Թէ՛ գիւղացիները եւ թէ՛ քաղաքացիները բազմիցս այս հարցը արծարծած են համապատասխան մարմիններու հետ, սակայն, ինչպէս շատ մը խոստումներ եւ ծրագրեր, այս առնչութեամբ կատարուած դիմումները եւս կը մնան դարակներու մէջ...

Հետաքրքրականը այն է, թէ հազիւ արկածներն ու ջրհեղեղները պատահած քաղաքացիներուն պաշտօնները կը

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ԼՕՍԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բենադիչ ՆԱՐԵԿ ՏՈՒՐԵԱՆ
Լիբանանի մէջ կը ներկայացնէ
«WELCOME TO GLENDALE»
կատակերգութիւնը 2 արարով

Ուրբաթ, 7 Փետրուար 2003, ԿԱԼԱ.
Շաբաթ 8 եւ Կիրակի 9 Փետրուար 2003, Երեկոյեան ժամը 8:30-ին.
Կիրակի 9 Փետրուար 2003, Երեկոյեան. կէսօրը ետք ժամը 4:00-ին.
«Յակոբ Տէր Մելքոնեան» բառարանային մէջ:
Տոմսերը ստանալ՝ ԼՕՍԻ Ձեռարուեստի խանութէն.
Համազգայինի Գրատունէն. Anto Sport-էն.
Longine Հաստատութիւն - Վալէ Արամեան - ժայ Էլ Տիպ.
Գրատուն Կոմիտաս - Zokak El Blat
ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան Գրասենեակէն:

www.hamazkayin.com

ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

ԱՌՈՂՁ ՄՆԵԴԱԿԱՆՈՆԸ՝ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ Ա.

Չափահաս տարիքին նիւթարնալու նպատակով սննդականոնի հետեւիլը դիւրին բան չէ: Այս պատճառով մանկութենէն առողջ սննդականոնի հետեւիլը անհրաժեշտ է: Մտողներ պէտք է ցուցմունքներ տան իրենց զաւակներուն եւ առաջնորդեն զանոնք հետեւելու առողջ սննդականոնի: Պատանիներու որոշ տոկոս մը գիրութենէ կը տառապի: Գիրութեան առաջը առնելու համար պէտք է նուազեցնել տապակոցներն ու անուշեղէնի տեսակները:

- ԱՌՈՂՁ ՄՆԵԴԱԿԱՆՈՆԸ՝ ՀԱՄԱԶԱՅՆ ՏԱՐԻՔԻ**
- Մէկ տարեկանէն երեք տարեկանի միջեւ
- Նախաճաշ
 - Կէս գաւաթ կաթ
